# ՎՐԱՍՏԱՆ

«ᲕᲠᲐᲡᲢᲐᲜᲘ» (ᲡᲐᲥᲐᲠᲗᲕᲔᲚᲝ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 39 - 40 (16235) ՇԱԲԱԹ, 17 ՄԱՅԻՍԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ - ՖՐԱՆՍԻԱ

## ԸՆԴԳԾՎԵՑ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ



*Մայիսի 13-ին, պաշտոնական այցով, Թբիլիսիում էր գտնվում Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդը:*

Ֆրանսիայի նախագահի Վրաստան կատարած այցի շրջանակներում, կայացավ Վրաստանի եւ Ֆրանսիայի նախագահներ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Ֆրանսուա Օլանդի հանդիպումը: Հանդիպմանը խոսեցին Ռուսաստանի կողմից 2008 թվականի օգոստոսի 12-ի հրադադարի պայմանագրի պահանջներն անտեսելու մասին: Օլանդն ընդգծեց, որ այդ հարցում, ինչպես նաեւ Ուկրաինայում ծավալված իրադարձության կապակցությամբ, Եվրամիությունն է՛լ ավելի է խստացնելու դիրքորոշումը Ռուսաստանի նկատմամբ:

Նախագահական նստավայրում կայացած հանդիպմանը, Գիորգի Մարգվելաշվիլին եւ Ֆրանսուա Օլանդը անդրադարձան նաեւ տարածաշրջանային հակամարտությունների հարցին: Ֆրանսիայի նախագահի կարծիքով, Վրաստանը կարող է գործուն մասնակցություն ունենալ Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ Լեռնային Ղարաբաղի միջեւ ստեղծված իրավիճակի կարգավորման հարցին:

Անդրադառնալով ՆԱՏՕ-ում Վրաստանի անդամակցության հարցին՝ Գիորգի Մարգվելաշվիլին իր ֆրանսիացի գործընկերոջը հավաստիացրեց, որ Վրաստանն արժանիորեն կներկայանա առաջիկա գագաթաժողովին:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի եւ Ֆրանսիայի միջեւ տնտեսական համագործակցության

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 69-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

*Մայիսի 9-ին Թբիլիսիում, Վակեի Հաղթանակի զբոսայգում, անցկացվեցին միջոցառումներ՝ նվիրված ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի 69-րդ տարեդարձին:*



Այդ օրը Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի ուղեկցությամբ, եղավ Հաղթանակի զբոսայգում եւ ծաղկեպսակներ դրեց Անհայտ զինվորի գերեզմանին: Վարչապետը ներկաներին տեղեկացրեց, որ, Վրաստանի կառավարության որոշմամբ, Երկրորդ համաշխարհային պատերազմում վրաստանցի վետերանները՝ որպես միանշանակ դրամական օգնություն, Մեծ հաղթանակի տարելիցի առթիվ կստանան 400 լարի, իսկ պատերազմում կերակրողին կորցրածները՝ 200 լարի:

Նշենք, որ, ներկա դրությամբ, Վրաստանի տարածքում ապրում է Երկրորդ համաշխարհային պատերազմի շուրջ 2 հազար վետերան:

Մեծ հաղթանակի առթիվ, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Թբիլիսիի նախագահական նստավայրում հանդիպում ունեցավ պատերազմի վետերանների հետ:

Նախագահը վետերաններին շնորհակալություն հայտնեց նրանց արիության եւ անկոտրում կամքի համար, տասը վետերանի պարգեւատրեց շքանշաններով, իսկ 300-ին փոխանցեց 100-ական լարիի վաուչեր:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՄԲ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՍԿՍՎԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ»

### ԵՎՐԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

*Մայիսի 14-ին, երկօրյա պաշտոնական այցով, Թբիլիսի ժամանեց Եվրամիության Եվրախորհրդի նախագահ Հերման Վան Ռոմպեյը: Այցի շրջանակներում, Եվրամիության ներկայացուցիչը հանդիպումներ ունեցավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեի հետ:*



Ինչպես նշեց Հերման Վան Ռոմպեյը, այցի նպատակն է Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի ստորագրման կապակցությամբ ծանոթանալ Վրաստանում առկա քաղաքական իրավիճակին, տարածաշրջանային կայունության եւ անվտանգության հարցերին, Վրաստանի եւ Եվրամիության միջեւ համագործակցության հրատապ հարցերին:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ հանդիպմանը, կողմերը քննարկեցին Վրաստանի եւ Եվրամիության միջեւ հարաբերությունների, մասնավորապես, Ռիգայում անցկացվելիք «Արեւելյան գործընկերության» գագաթաժողովի հետ առնչվող հարցեր:

Հանդիպումից հետո անցկացված համատեղ ասուլիսում, Հերման Վան Ռոմպեյը հայտարարեց, որ Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագիրը հունիսի 27-ին Վրաստանի անունից կստորագրի երկրի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԵՌԱՏՈՆԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԵՌԱՏՈՆԸ

*Հայաստանի մայրաքաղաք Երեւանում եւ մյուս բոլոր քաղաքներում մայիսի 9-ին անցան Հայրենական մեծ պատերազմի 69-րդ, ԼՂՀ պաշտպանության բանակի եւ Շուշիի ազատագրման տարեդարձներին նվիրված Եռատոնի հանդիսավոր միջոցառումները:*



Հայկական երկու հանրապետությունների նախագահներ Սերժ Սարգսյանն ու Բակո Սահակյանը Ստեփանակերտի հուշահամալիրում ծաղկեպսակ ու ծաղիկներ դրեցին Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանին եւ Արցախյան ազատամարտի նահատակների շիրիմներին:

## ԹԲԻԼԻՍԻ. ՏՈՆԵՑԻՆ ԵՐԳ ՈՒ ՊԱՐՈՎ

*Հայրենական մեծ պատերազմի 69-րդ, Շուշիի ազատագրման եւ ԼՂՀ բանակի կազմավորմանը նվիրված Եռատոնի՝ մայիսի 9-ի տոնակատարությունը պետք է տեղի ունենար Թբիլիսիի համերգային սրահներից մեկում՝ «Art Hall»-ում, սակայն սրահի ղեկավարությունը, Վրաստանի ադրբեջանական ինչ-որ հասարակական կազմակերպության ճնշման տակ, հրաժարվեց բեմը տրամադրել միջոցառման անցկացման համար: Այնուամենայնիվ, միջոցառումը կայացավ Թբիլիսիի Սուրբ Էջմիածին եկեղեցու հարակից տարածքում, որտեղ հավաքված ավելի մեծ քանակությամբ մարդկանց ներկայությամբ կազմակերպվեց բացօթյա տոնական համերգ:*

*Ընթերցվեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի տոնական ուղերձը: Համերգին մասնակցեցին Թբիլիսիի հայկական պարային համույթները, անհատ կատարողներ, ասմունքողներ եւ «Հայարտուն» կենտրոնի մշակութային խմբակները:*

*Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը իր երախտագիտությունը հայտնեց Վրաստանի ներքին գործերի նախարարությանը հանդիսության անխափան ընթացքն ապահովելու համար եւ շարունակեց. «Մենք մեր վրաց եղբայրների հետ միասին, այստեղ ապրող ռուսների, հրեաների, ադրբեջանցիների, քրդերի, օսերի ու այլ ազգերի ներկայացուցիչների հետ համերաշխ ապրում ենք, որովհետեւ Վրաստանը մեր բոլորի հայրենիքն է»:*



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՌԴ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՎԱՆՈՒՄ

*Մայիսի 13-ին, Մաքսային միությանն անդամակցության շրջանակներում, Երեւանում կայացավ Հայաստանի ֆինանսների նախարարի հանդիպումը Վրաստանի եւ Ռուսաստանի Դաշնության մաքսային ծառայությունների ղեկավարների հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանից Ռուսաստան եւ հակառակ ուղղությամբ ապրանքների տարանցիկ ձեւակերպումների առանձնահատկությունները:*

Եռակողմ ձեւաչափն ընտրվել է երեք պետությունների սահմանային անցակետերով ապրանքների տեղաշարժն արագ եւ առանց բարդությունների կազմակերպելու նպատակով: Կողմերը որոշում են կայացրել սահմանահատման ընթացակարգերի հստակեցման ու պարզեցման հնարավորությունները հանգամանորեն քննարկելու եւ համատեղ լուծումներ առաջարկելու նպատակով աշխատանքային մասնագիտացված խմբեր ձեւավորել ու երկրներից յուրաքանչյուրի մաքսային ծառայության տեսանկյունից կարգավորման ենթակա խնդիրների ցանկը ներկայացնել համատեղ քննարկման:

Հայաստանի ֆինանսների նախարար Գագիկ Խաչատրյանն ընդգծել է, որ քննարկվել են հիմնականում այն հարցերը, որոնք կարող են

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՖՐԱՆՍԻԱ

# ԸՆԴԳԾՎԵԾ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

հարցերը: Հանդիպմանն ընդգծվեց տնտեսական հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը: Կողմերն անդրադարձան նաեւ Եվրամիության հետ Ասոցիացման պայմանագրի հունիսի 27-ին նախատեսված ստորագրման, ինչպես նաեւ ՆԱՏՕ-ի՝ Վրաստանի անդամակցության հեռանկարին առնչվող հարցեր: Ղարիբաշվիլին Ֆրանսիայի նախագահին շնորհակալություն հայտնեց ցուցաբերած աջակցության համար: Առանձնազրույցից հետո անցկացված ընդլայնված բանակցությունների ընթացքում առանձնակի ուշադրություն հատկացվեց ներդրումների հարցին:

Ֆրանսիայի նախագահի այցի շրջանակներում, անցկացվեց վրաց-ֆրանսիական բիզնես-ֆորում:



Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի ներկայությամբ Թբիլիսիում ստորագրվեց Վրաստանում Ֆրանսիայի զարգացման գործակալության հիմնադրման համաձայնագիրը: Վրացական կողմից այն ստորագրեց ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, իսկ ֆրանսիական կողմից՝ արտաքին առեւտրի, զբոսաշրջության եւ սփյուռքի աջակցության հարցերով Ֆրանսիայի կառավարության պետխորհրդական Ֆլոր Փելերոնը: Երկու երկրների ղեկավարների ներկայությամբ ստորագրվեց նաեւ Ճիաթուրայում ճոպանուղու նորացման նախագծի համար Ֆրանսիայի կողմից 13,2 միլիոն եվրո գումար հատկացնելու մասին պայմանագիրը:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

# ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ԱՍՈՑԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՄԲ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԵՎՐԱՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿՍԿՍՎԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓՈՒԼ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Իր հերթին, Իրակլի Ղարիբաշվիլին հայտարարեց, որ Ասոցիացման համաձայնագիրը արտակարգ նշանակություն ունի Վրաստանի համար: Վարչապետի խոսքերով, Ասոցիացման համաձայնագրի ստորագրումից հետո, Վրաստանն է՛լ ավելի կակտիվացնի եվրամիության հետ մերձեցման քաղաքականությունը: «Ասոցիացման համաձայնագրի ստորագրմամբ, Վրաստանի եւ եվրամիության միջեւ կսկսվի համագործակցության նոր փուլը»,- հայտարարեց Վրաստանի վարչապետը:

«Ցանկանում եմ ձեզ հայտնել, որ մենք այսօր ստացանք այն բանի հավաստումը, որ Ասոցիացման համաձայնագիրը Վրաստանը կստորագրի հունիսի 27-ին»,- նշեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Վրաստանի կառավարությունում Իրակլի Ղարիբաշվիլու եւ Հերման Վան Ռոմպեյի առանձնազրույցից հետո անցկացված ընդլայնված հանդիպմանը վրացական կողմը ներկայացրեց Վրաստանում անցկացվող բարեփոխումները, եվրաինտեգրման ուղղությամբ իրականացվող կոնկրետ քայլերը:

Հանդիպմանը Վրաստանի վարչապետը եվրահանձնաժողովին շնորհակալություն հայտնեց բարեփոխումների անցկացման համար ֆինանսական օգնության ցուցաբերման կապակցությամբ: Ինչպես նշեց եվրամիության եվրախորհրդի նախագահ Հերման Վան Ռոմպեյը, Վրաստանի բարեփոխումների անցկացման համար հատկացվում է 30 միլիոն եվրո: «Հուսով ենք, որ եվրամիությունն առաջիկայում էլ Վրաստանին օգնություն կցուցաբերի առկա ռեսուրսների ու լծակների կիրարկման գործում»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԹԻՎԸ ՃՇԳՐՏՎՈՒՄ Է

*Մայիսի 15-ին Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամլո խոսնակ Էկա Ազարաշվիլին հատուկ հրավիրված մամլո ասուլիսում հայտարարեց, որ ներկա դրությամբ երկրում գրանցվել է 3472772 ընտրող, եւ ընտրողների ցուցակի ճշգրտումը շարունակվում է:*

«Քանի որ ցուցակների ճշգրտման ժամկետը օրենսդրությամբ դեռեւս չի սպառվել, այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են: Մայիսի 16-ից կսկսվի ընտրողներին տեղեկատվական քարտերի բաժանումը: Ընտրություններից մեկ ամիս շուտ ընտրողները իրավասու են ցուցակներում ստուգելու գրանցումները»,- հայտարարեց ԿԸՀ-ի մամլո խոսնակը եւ հավելեց, որ, անճշտության բացահայտման դեպքում, ընտրողները կարող են անմիջապես կապվել ԿԸՀ-ի հետ՝ 2-51-00-51 հեռախոսահամարով: Ճշգրտումների վերջնաժամկետը մայիսի 29-ն է:

# ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

Հունիսի 15-ին անցկացվելիք տեղական ինքնակառավարման ընտրությունների քարոզարշավի շրջանակներում ոչ խորհրդարանական ընդդիմության լիդերներ Կախա Կուկավան եւ Մամուկա Կացիտաձեն հանդիպումներ անցկացրին Ախալքալաքիում, հանդիպում ունեցան երկրամասի կուսակցական եւ մեծամասնական ցուցակներով առաջադրված պատգամավորության թեկնածուների հետ:

Ոչ խորհրդարանական ընդդիմության ներկայացուցիչները հանդիպում ունեցան տեղի բնակիչների հետ՝ նրանց ներկայացնելով իրենց նախընտրական ծրագիրը:

# ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆ ՍԿՍՈՒՄ Է ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

*Միասնական ազգային շարժումը, Թբիլիսիի մարզապալատում անցկացված 15 հազարանոց հավաքից հետո, սկսեց նախընտրական քարոզարշավը:*

Ներկաների առջեւ ելույթ ունեցան կուսակցության նախագահ Դավիթ Բաքրաձեն, նախընտրական շտաբի ղեկավար Գիգի Ուգուլավան: Նրանք ներկաներին ներկայացրին ինքնակառավարման քաղաքներում առաջադրվող իրենց թեկնածուներին: Մասնավորապես, Թբիլիսիի քաղաքապետի պաշտոնի համար առաջադրվել է Նիկա Մելիայի, Ախալցիխեում՝ Գելա Դեմետրաձեի թեկնածությունը:

Հատկանշական է, որ ազգային շարժումը իր նախընտրական ծրագրի հիմքում դրել է հարկային վճարումների նվազեցման խնդիրը: Խոսքը վերաբերում է ոչ միայն կոմունալ հարկերին, այլեւ եկամտահարկին:

Նշենք, որ ԿԸՀ դատարանի որոշմամբ, վերականգնվել է Միասնական ազգային շարժման «5» ընտրահամարը:

# ՇԱԼՎԱ ՆԱԹԵԼԱՇՎԻԼԻՆ ՊԱՏՐԱՍՏ Է ԶԲԱՂԵՑՆԵԼ ԹԲԻԼԻՍԻԻ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԸ

*Այն դեպքում, երբ Վրաստանի Լեյբորիստական կուսակցությունը Թբիլիսիի սակրեբուլոյում նվաճի տեղերի մեծամասնությունը, կուսակցության լիդեր Շալվա Նաթելաշվիլին պատրաստ է զբաղեցնել սակրեբուլոյի նախագահի պաշտոնը:*

«Հավանաբար, բոլորը հիշում են այն խոսակցությունները, որ ես իբր սակրեբուլոյի նախագահի պաշտոնը զիջեցի Միխեիլ Սաակաշվիլին: Դա կեղծիք է, եւ այսօր դրան ոչ մեկը չի հավատում, քանի որ մենք սակրեբուլոյում երբեք չենք ունեցել այնպիսի մեծամասնություն, որ կարողանայինք որոշում ընդունել: Երկար խորհելուց հետո, որոշեցի, սակրեբուլոյի 50 մանդատներից 26-ը ստանալուց հետո, ստանձնել պատասխանատվություն եւ զբաղեցնել սակրեբուլոյի նախագահի պաշտոնը»,- հայտարարել է Նաթելաշվիլին:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՌԴ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՎԱՆՈՒՄ



(Սկիզբը՝ 1-ին էջում)

ի հայտ գալ ՄՄ անդամակցության գործընթացում:

Ռուսաստանի Դաշնության մաքսային ծառայության ղեկավար Անդրեյ Բելյանինովն ընդգծել է, որ Հայաստանը պատրաստ է դառնալ ՄՄ լիիրավ անդամ, եւ այդ ուղղությամբ բավականին աշխատանքներ արդեն իրականացվել են:

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության ղեկավար Իրակլի Գվարամաձեն ներկայացված բոլոր ուղղություններով արդյունավետ համագործակցության պատրաստակամություն է հայտնել:



ՈՒԿՐԱԻՆԱ

## ՀԱՆՐԱՔՎԵՆ ԱՆՑԿԱՑՎԵՑ

*Մայիսի 11-ին, Ուկրաինայի Դոնեցկի եւ Լուգանսկի մարզերում, անցկացվեց տարածաշրջանների ինքնորոշման շուրջ հանրաքվեներ, որոնց ընթացքում բնակչության մեծամասնությունը պաշտպանեց պետական անկախության գաղափարը: Հանրաքվեի քվեաթերթիկներում եղել է միայն մեկ հարց՝ պաշտպանո՞ւմ եք դուք, արդյոք, համապատասխանաբար՝ Դոնեցկի եւ Լուգանսկի ժողովրդական հանրապետությունների պետական անկախությունը:*

*Դոնեցկում անցկացված հանրաքվեի արդյունքներով, անկախությանը «կողմ» է քվեարկել ընտրողների 89,7 տոկոսը, «դեմ»՝ 10,19 տոկոսը:*

*Լուգանսկի մարզում պետական ինքնուրույնության օգտին քվեարկել է ընտրողների ավելի քան 90 տոկոսը:*

*Դոնեցկի մարզում հանրաքվեին մասնակցությունը կազմել է 74,87 տոկոս, Լուգանսկի մարզում՝ 81 տոկոս:*

*ԱՄՆ-ը եւ Եվրամիությունն արդեն հայտարարել են, որ չեն ճանաչում Լուգանսկի եւ Դոնեցկի մարզերի կարգավիճակի շուրջ քվեարկության արդյունքները եւ նախազգուշացրել են Ռուսաստանի դեմ տնտեսական պատժամիջոցներ սահմանելու հնարավորության մասին, եթե Ուկրաինայի արեւելքում կայացած քվեարկության պատճառով խափանվեն մայիսի 25-ին կայանալիք նախագահական ընտրությունները:*

## ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻՆ

*Ուկրաինայի նախագահի պաշտոնակատար, Գերագույն ռադայի խոսնակ Ալեքսանդր Տուրչինովը հայտարարել է, որ այսպես կոչված հանրաքվեն, որը մայիսի 11-ին անջատականներն անցկացրել են Դոնբասում, ոչ մի իրավական հետեւանք չի ունենա, բացառությամբ՝ դրա կազմակերպիչների քրեական պատասխանատվության:*

*«Այն ֆարսը, որն ահաբեկիչներն ու անջատողականները անվանում են հանրաքվե, ոչ այլ ինչ է, քան մարդկանց սպանությունների, առեւանգումների, բռնությունների եւ այլ ծանր հանցագործությունների քարոզչական քողարկում»,- ասել է Տուրչինովը:*

*Նրա խոսքով, Դոնեցկի ու Լուգանսկի մարզերի տնտեսության համար այդ քայքայիչ գործընթացները, որոնք իրապես սպառնում են քաղաքացիների կյանքին ու բարեկեցությանը, «հրահրվել են Ռուսաստանի Դաշնության ղեկավարության կողմից, որոնց նպատակը Ուկրաինայի իրադրության լիակատար ապակայունացումն է, նախագահական ընտրությունների վիժեցումը եւ Ուկրաինայի իշխանության տապալումը»:*

ԹՈՒՐՔԻԱ

## ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐ ՀԱՆՔԱՀՈՐՈՒՄ

*Թուրքիայի Մանիսայի նահանգի Սոմայի ածխահանքում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով, 787 մարդ մնացել է գետնի տակ: Վերջին պաշտոնական տվյալներով, զոհվել է 284 մարդ, ոչ պաշտոնական տվյալներով՝ 352 մարդ: Հարյուրավոր մարդիկ վիրավորվել են: Սոմա ավանում, ածխահանքում տեղի ունեցած պայթյունի հետեւանքով մեծ թվով մարդկանց զոհվելու պատճառով, երկրի 19 քաղաքում զանգվածային բողոքի ակցիաներ են սկսվել: Մարդիկ բողոքում են կառավարության դեմ՝ պահանջելով նրա հրաժարականը:*

*Թուրքիայի Մանիսա նահանգի Սոմա քաղաքի ածխահանքում տեղի ունեցած պայթյունի եւ ավելի քան 2 հարյուր մարդու զոհվելու կապակցությամբ Թուրքիայում եռօրյա համազգային սուգ է հայտարարվել:*

## Ճարաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

# ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԵՎՐՈՊԱՅԻ ՕՐԸ

*Մայիսի 10-ին, Թբիլիսիի ազգագրական թանգարանի մոտ, բաց երկնքի տակ, անցկացվեցին եվրոպայի օրվան նվիրված մի շարք միջոցառումներ:*



Մասնավորապես, անցկացվեցին ցուցահանդեսներ, գրքի փառատոներ, տոնական համերգներ:

Եվրոպայի օրը նշվեց նաեւ Վրաստանի խորհրդարանում: Տոնի կապակցությամբ, խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներին ցուցադրեց եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի մասին պատմող տեսահոլովակը: Երեք րոպե տեւողությամբ տեսահոլովակում նյութերը ներկայացված էին վրացերեն, հայերեն, ադրբեջաներեն, աբխազերեն եւ օսերեն: Տեսահոլովակը տեղադրվել է խորհրդարանի պաշտոնական կայքում:

Տոնի առթիվ, Դավիթ Ուսուփաշվիլին հանրագումարեց աշակերտների շրջանում անցկացված «Իմ նամակը եվրոպային» մրցույթի արդյունքները, պարգեւատրեց մրցույթի 14 հաղթողներին՝ նրանց հանձնելով պատվոգրեր, 50 լարիանոց վաուչեր եւ պայուսակներ:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ



# ԱԼՅԱՆՍԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ԱՆՇՐՋԵԼԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ Է

*Վրաստանի արտաքին գործերի փոխնախարար Դավիթ Զալկալիանու հայտարարությամբ, ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրումը անշրջելի գործընթաց է:*

Մեկնաբանելով Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հայտարարությունն այն մասին, որ Ռուսաստանը մտահոգված է ՆԱՏՕ-ին Վրաստանի եւ Ուկրաինայի ներքաշմանն ուղղված փորձերի կապակցությամբ՝ փոխնախարարը հայտարարեց. «ՆԱՏՕ-ին անդամակցությունը միայն Վրաստանի եւ ալյանսի գործն է, եւ Ռուսաստանն այն արգելել չի կարող»: «Մենք եւ ոչ միայն մենք, այլեւ մեր եվրոպական գործընկերներն ու ԱՄՆ-ը համոզված են, որ ալյանսին անդամագրության ճանապարհին հասել ենք մեծ առաջընթացի, եւ դա իր արտացոլումը կգտնի Ուելսում՝ ՆԱՏՕ-ի առաջիկա գագաթաժողովում»,- հայտարարեց Դավիթ Զալկալիանին:

Իր հերթին, եվրոպական եւ եվրատլանտյան կառույցներին ինտեգրման պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին նշեց, որ Ուելսում, առաջիկա գագաթաժողովում Վրաստանը նշանակալի հաջողությունների կհասնի:

Նշենք, որ մայիսի 15-ին ալյանսի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենը հայտարարեց, որ ՆԱՏՕ-ն դեռեւս չի լուծել սեպտեմբերի գագաթաժողովում Վրաստանին՝ Դաշինքին անդամակցության գործողությունների պլան տրամադրելու հարցը:

Ելույթ ունենալով անվտանգության հարցերի շուրջ Սլովակիայում ընթացող գագաթաժողովում՝ Ռասմուսսենը, պատասխանելով այն հարցին, թե Վրաստանը կարո՞ղ է, արդյոք, սեպտեմբերի գագաթաժողովում ակնկալել դաշինքին անդամակցելու գործողությունների պլանը, նշեց. «Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա մենք կքննարկենք բաց դռների քաղաքականությունը, բայց առայժմ չափազանց վաղ է խոսել, թե ինչ ձեւով: Ես կարծում եմ, որ Վրաստանը բարեփոխումների առումով զգալի առաջընթաց է արձանագրել, անցկացրել է օրինակելի ընտրություններ, օժանդակել է Աֆղանստանում ՆԱՏՕ-ի գործողությանը եւ նպաստել փոխգործակցության ամրապնդմանը: Այդ առաջընթացը պետք է նշվի գագաթաժողովում: Բայց դեռեւս փոքր-ինչ վաղ է խոսել, թե՝ հատկապես ինչպես»:

Հիշեցնենք, որ ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման ավելի ուշ հայտարարել է, որ այս փուլում ՆԱՏՕ-ն չի ծրագրում ընդլայնվել:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ՎՐԱՍՏԱՆԸ ՉԻ ՃԱՆԱՉՈՒՄ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՀԱՆՐԱՔՎԵՆԵՐԸ

*Վրաստանը չի ճանաչում Ուկրաինայում անցկացված հանրաքվեները: Այդ մասին իր գործընկեր Ֆրանսուա Օլանդի հետ համատեղ մամլո ասուլիսում հայտարարեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին:*

«Վրաստանը լրիվությամբ պաշտպանում է Ուկրաինայի անկախությունը, տարածքային ընդհանրությունն ու քաղաքական առաջիկա նպատակը, որն ուղղված է իրավիճակի կարգավորմանը: Կարգավորումը կլինեն մայիսի 25-ի ընտրությունները: Վրաստանը պաշտպանում է այդ ընտրությունները եւ չի ճանաչում մինչ այդ անցկացված հանրաքվեները»,- հայտարարեց Վրաստանի նախագահը:

Իր հերթին, Վրաստանի ԱԳ նախարարությունը դատապարտեց Ուկրաինայի Դոնեցկի եւ Լուգանսկի մարզերում հանրաքվեների անցկացումը: Ինչպես ասված է գերատեսչության հայտարարության մեջ, այդ հանրաքվեները զուրկ են տրամաբանությունից, եւ Վրաստանը դրանց արդյունքները չի ճանաչում: «Վրաստանի ԱԳՆ-ն գտնում է, որ նման քայլերը չեն նպաստում Ուկրաինայում իրավիճակի կայունացմանը: Վրաստանի ԱԳՆ-ն կրկին վավերացնում է իր աջակցությունը Ուկրաինայի ինքնությանը եւ տարածքային ամբողջականությանը ու պաշտպանում է իրավիճակի կարգավորման ուղիների որոնմանն ուղղված միջազգային ջանքերը»,- ասված է Վրաստանի ԱԳ նախարարության հայտարարության մեջ:

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

# ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄՆ ԱՎԵԼԱՑՎԵԼ Է ՄԻՆՉԵՎ 2,5 ՄԻԼԻԱՐԴ ԵՎՐՈ

*Եվրամիությունը, 2010-ից մինչեւ 2013 թվականն «Արեւելյան գործընկերության» ծրագրի շրջանակներում, նախագծերի ֆինանսավորումն ավելացրել է մինչեւ 2,5 միլիարդ եվրո:*

Այս մասին ասված է Եվրահանձնաժողովի ղեկավար Ժոզե Մանուել Բառոզուի հայտարարության մեջ:

«Ընդհանուր առմամբ, մենք մինչեւ 2,5 միլիարդ եվրո ավելացրել ենք երկկողմ եւ տարածաշրջանային նախագծերի ֆինանսական օժանդակումը, որոնք միտված են 2010-ից մինչեւ 2013 թվականը գործընկերության նպատակներին հասնելուն»,- ասված է Բառոզուի հայտարարության մեջ: Նա նշել է նաեւ, որ Եվրամիության առաջիկա 7 տարվա բյուջեն երաշխավորում է, որ Բրյուսելը կկարողանա օժանդակել Արեւելյան Եվրոպային:

«Մենք հուսով ենք ամբողջությամբ ստորագրել Ասոցիացման ու Ազատ առեւտրի համաձայնագիրն Ուկրաինայի, Վրաստանի եւ Մոլդովայի հետ ու առաջընթացի հասնել Հայաստանի եւ Ադրբեջանի հետ համատեղ նախագծերում»:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ

*Վրաստանի վարչապետ, «Վրացական երազանք» կոալիցիայի լիդեր Իրակլի Ղարիբաշվիլին օրենսդրական նախաձեռնությամբ դիմել է խորհրդարանական մեծամասնությանը, ըստ որի, տեղական ինքնակառավարման ընտրությունների անցկացումից հետո, աշխատակիցների պաշտոնաթողություն չի իրականացվի, եւ հաստիքների օպտիմիզացման որոշումը ինքնուրույն ընդունելու է մունիցիպալիտետը:*



Մայիսի 14-ին Վրաստանի խորհրդարանը, առաջին ընթերցմամբ, ընդունեց հանրային ծառայության մասին օրենքի փոփոխությունը:

Գործող օրենսդրության համաձայն, տեղական ընտրություններից հետո, տեղական ինքնակառավարման մարմինների բոլոր աշխատակիցները հայտարարվում են ժամանակավոր պաշտոնակատարներ եւ իրենց պաշտոնում կարող են վերականգնվել մրցույթի հիման վրա: Այդ կապակցությամբ, գործնականում ինքնակառավարման բոլոր մակարդակներով անցկացվում են վերակազմավորում: Իրակլի Ղարիբաշվիլու առաջարկության համաձայն, տեղական ինքնակառավարման ընտրությունների անցկացումից հետո աշխատակիցների պաշտոնաթողություն չի իրականացվի, եւ հաստիքների օպտիմիզացման որոշումը ինքնուրույն ընդունելու է մունիցիպալիտետը: Վարչապետի հավաստմամբ, վերակարգավորումն իրականացվելու է աստիճանաբար եւ օրենքին համապատասխան:

Ընդունված փոփոխության համաձայն, հունիսի 15-ի տեղական ընտրություններից հետո, ինքնակառավարման մարմինների աշխատակիցները կմնան իրենց աշխատատեղերում, քանի որ օրենքի փոփոխությունը վերացնում է անցումային ժամանակահատվածում ժամանակավոր պաշտոնակատարի կարգավիճակը:



## ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՇՔԵՐԹ ՉԻ ԼԻՆԻ

*Վրաստանի անկախության օրվա՝ Մայիսի 26-ի տոնական միջոցառումների կազմակերպչական աշխատանքային խումբը իր հերթական նիստում, որին մասնակցում էին նախարարությունների, Թբիլիսիի քաղաքապետարանի եւ նախագահի աշխատակազմի ներկայացուցիչները, քննարկեց տոնական միջոցառումների ծրագիրը:*

*Մշակված աշխատանքային տարբերակի համաձայն, մայիսի 26-ին ժողովրդական տոնակատարությունը կանցկացվի առանց զինվորական շքերթի: Բոլոր միջոցառումները նախատեսում են բնակչության զանգվածային ներգրավում, եւ, մայրաքաղաքից բացի, դրանք անցկացվելու են նաեւ տարածաշրջաններում: Տոնական միջոցառումների ծրագիրը ներկայացվելու է կառավարական հանձնաժողովին, որի նախագահը վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին է:*

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑՈՎ՝ ԱԴՐԲԵՋԱՆ

*Վրաստանի ներքին գործերի նախարար Ալեքսանդր Ճիկաիձեն մայիսի 13-ին պաշտոնական այցով մեկնեց Ադրբեջան:*

*Այցի շրջանակներում, Վրաստանի ՆԳ նախարարը հանդիպում ունեցավ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի, ՆԳ նախարարի, արտակարգ իրավիճակների նախարարի եւ Պետական սահմանապահ ծառայության ղեկավարի հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին գերատեսչությունների միջեւ համագործակցության հարցերը: Արծարծվեցին նաեւ վերջին ժամանակներս Վրաստանի ՆԳ նախարարությունում իրականացված բարեփոխումները: Վրաստանի ՆԳ նախարարի Ադրբեջան այցը կավարտվի մայիսի 16-ին:*

## ՎՐԱՑ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ ԿԱՀ-ՈՒՄ

*Վրաստանի զինված ուժերի՝ Բաթումիի հետեւակային գումարտակի ստորաբաժանումներից մեկը խաղաղապահ առաքելությամբ Կենտրոնաաֆրիկյան Հանրապետություն (ԿԱՀ) կուղեւորվի այս տարվա հունիսին: Այդ մասին հայտնի է դարձել Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի՝ Վրաստան կատարած այցի արդյունքում, որը տեղի է ունեցել մայիսի 13-ին:*

*Վրացի 150 զինծառայողից բաղկացած ստորաբաժանումն արդեն պատրաստության հատուկ դասընթաց է անցել, այդ թվում՝ ֆրանսիացի հրահանգիչների օգնությամբ, եւ պատրաստ է առաքելությանը, որն ընթանալու է Ֆրանսիայի հրամանատարության ներքո:*

*Ինչպես հայտնել է Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, «ԿԱՀ կուղեւորվեն այն զինծառայողները, ովքեր արդեն ունեն արտասահմանում խաղաղապահ գործունեության լավ փորձ»:*

## ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ՝ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՀԱՋՈՐԴ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Վրաստանի կառավարությունը փոխհատուցման վճարում է ծրագրում երրորդ եւ հաջորդ ծնված երեխաների համար՝ 150-200 լարիի չափով: Այդ մասին վարչապետը հայտարարեց Քութայիսիում բուժհաստատությունների աշխատողների հետ հանդիպման ժամանակ:*

*Նրա տեղեկատվությամբ, «Մոր եւ մանկան պաշտպանության» նախագծի շրջանակներում, բոլոր հղիները անվճար կստանան կիտրոնաթթու: Վարչապետի խոսքերով, ժողովրդագրական հիմնախնդրի կարգավորման նպատակով, Վրաստանի կառավարությունը դեռեւս անցյալ տարի սկսեց առողջապահության պետական ծրագրերից մեկի շրջանակներում ծննդաբերության ֆինանսավորումը: Բացի այդ, ավելացվեց ֆիզիոլոգիական արձակուրդի ժամկետը՝ 4-6 ամիս, իսկ արձակուրդի ֆինանսավորումը 600-ից հասցվել է 1000 լարիի: Կառավարության ղեկավարը խոսեց նաեւ ամբուլատորիաների շինարարության նախագծի մասին:*

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

# ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑԻՆ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



*Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլուն ներկայացվել է ընդհանուր առողջապահության տարվա արդյունքները:*

Վարչապետը գոհունակություն հայտնեց այդ ուղղությամբ Համաշխարհային բանկի, առողջապահության համաշխարհային կազմակերպության եւ USAID-ի կողմից անցկացված ուսումնասիրությունների արդյունքների կապակցությամբ: Նշենք, որ, ուսումնասիրության արդյունքներով, բնակչության 80 տոկոսից ավելին դրական գնահատական է տալիս առողջապահության բարեփոխմանը: Ինչպես նշեց Իրակլի Ղարիբաշվիլին, վերոնշյալ արդյունքները կրկին անգամ ընդգծում են առողջապահության որակի մատչելիության ապահովման ուղղությամբ նոր կառավարության արդյունավետ գործունեությունը:

«Մենք քաղաքացիներին խոստացանք, որ կառավարությունը կհոգա, որպեսզի բոլոր քաղաքացիներն ստանան բժշկական սպասարկում եւ մեր խոստումը կատարեցինք: Մեր կողմից իրականացված բարեփոխումները բավականին դյուրացրին մեր քաղաքացիների վիճակն ու թեթեւացրին ֆինանսական բեռը»,- հայտարարեց վարչապետը:

Կառավարության ղեկավարը խոսեց նաեւ անօթեւան երեխաներին ապաստարանով ապահովելու հարցում նոր նախաձեռնության մասին: Վարչապետի խոսքերով, խնամակալության ծրագրին ավելացվում է ենթածրագիր, որը նախատեսում է ճգնաժամային վիճակում գտնվող ընտանիքների երեխաների օգնություն:

Կառավարության ղեկավարի խոսքերով, կարեւորագույն նշանակության խնդիր է նաեւ սահմանափակ հնարավորություններ ունեցող երեխաների խնամակալության հարցը:

Գնահատելով համընդհանուր առողջության ծրագիրը՝ առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն նշեց, որ ծրագրի իրականացմամբ լուծվում են բնակչությանն անհանգստացնող նշանակալի հիմնախնդիրներ:

«Ծրագրի նպատակն էր կարգավորել երկու հիմնախնդիր. նախ՝ հիվանդանալու դեպքում, քաղաքացիները կկարողանան անցնել լիարժեք բուժում, եւ երկրորդը՝ այդ բուժումը չի հանգեցնի ընտանիքի սնանկացման: Ներկա փուլում, կարելի է ասել, որ վերոնշյալ երկու հիմնախնդիրներն արդեն կարգավորվել են»,- հայտարարեց նախարարը:

Անդրադառնալով համընդհանուր առողջապահության ծրագրին՝ Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն նշեց, որ այդ ծրագրում ընդլայնվելու է դեղորայքի բաղադրիչը:

«Դեղորայքը բուժման անբաժանելի մասն է: Բնականաբար, երբ տարվում է ստացիոնար բուժում, դեղորայքը ֆինանսավորվում է: Իսկ ինչ վերաբերում է քրոնիկական հիվանդություններին, ապա այդ առումով գործում են պետական մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ շաքարախտը, որի համար առանձին դեղերի ֆինանսավորումը հատկացնում է պետությունը: Մենք գտնում ենք, որ դեղորայքի բաղադրիչը պետք է ընդլայնվի՝ ելնելով առաջնահերթություններից»,- հայտարարեց Սերգեյենկոն:

Նրա խոսքերով, երկրի բնակչության 72,46 տոկոսը գերադասությունը տվել է առողջապահության ապահովագրությանը:

Նախարարի պնդմամբ, այդ հարցում ներգրավված 14 ընկերություններին, ընդհանուր առմամբ, հատկացվել է 341,3 միլիոն լարի:

Ավելացնենք, որ հանդիպմանը ներկա էին ՄԱԿ-ի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Վրաստանում ԱՄՆ դեսպանության, USAID-ի ներկայացուցիչները, Վրաստանում եւ Կովկասում Համաշխարհային բանկի ներկայացուցչության ղեկավարությունը:

*ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

# ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ՀԱՐՑՈՎ ԽՈՐՀԵԼՈՒ ՀՆԳՕՐՅԱ ԺԱՄԿԵՏ

***Վրաստանի առողջապահության նախարար Դավիթ Սերգեյենկոն կառավարության քննարկմանն է ներկայացրել հղիության արհեստական ընդհատման հարցով խորհելու ժամկետը 3-ից 5 օրվա հասցնելու առաջարկությունը:***

Նախարարի խոսքերով, եռօրյա ժամկետը բացահայտորեն բավարար չէ կնոջը լիարժեք տեղեկատվության հանձնման եւ արհեստական ընդհատման հետեւանքների պարզաբանման համար:

Ինչ վերաբերում է երկրում 2014 թվականի առաջին եռամսյակում ծննդաբերության եւ ամուսնությունների գրանցման թեմային, ապա վերոնշյալ ժամանակահատվածում ծնվել է 14004 երեխա, եւ գրանցվել է 6810 ամուսնություն:

Պետական սպասարկումների զարգացման գործակալության տեղեկատվությամբ, առաջին եռամսյակում ծնված երեխաների 52 տոկոսը տղաներ են, իսկ 48 տոկոսը՝ աղջիկներ:

Հիշեցնենք, որ 2013 թվականին, ընդհանուր առմամբ, գրանցվել էր 34394, 2012-ին՝ 29932, իսկ 2011-ին՝ 30861 ամուսնություն:

Ինչ վերաբերում է ծնندաբերությանը, ապա 2013 թվականին ծնվել էր 57860, 2012 թվականին՝ 58175, իսկ 2011-ին՝ 59381 երեխա:

ՀԱՐՑՈՒՄ

# ՎԱՐԿԱՆԻՇԸ ՆՎԱԶՈՒՄ Է

***ԱՄՆ ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) պատվերով, հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից անցկացված հասարակական կարծիքի հարցման արդյունքների համաձայն, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու ժողովրդականության վարկանիշը նվազել է մինչեւ 46 տոկոսը: Նշենք, որ անցյալ տարվա նոյեմբերին այն կազմում էր 72 տոկոս:***

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին սպասում էր, որ իր վարկանիշը կընկնի: Նա այդ մասին հայտնել է լրագրողներին՝ մեկնաբանելով Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) հարցումը, որի համաձայն, նախագահի գործունեության հավանության վարկանիշը կազմում է 46 տոկոս: 2013 թվականի նոյեմբերին կատարված հետազոտության արդյունքում, նախագահի վարկանիշը 72 տոկոս էր:

Նրա հայտարարությամբ, Բիձինա Իվանիշվիլու քննադատությունից հետո, այն մարդիկ, ովքեր իրեն աջակցում էին նախկին վարչապետի շնորհիվ, այժմ դեմ են արտահայտվել:

«Իմ վարկանիշի անկումն ինձ համար միանգամայն սպասելի էր: Ես մինչ այդ էլ ասել եմ, որ Բիձինա Իվանիշվիլին մեծ ներդրում ունեցավ այն հաջողության մեջ, որը 62 տոկոսի տեսքով գրանցվեց ընտրություններում: Բնական է, որ Բիձինայի քննադատությունից հետո, մարդիկ, ովքեր ինձ աջակցում էին նրա շնորհիվ, իմ դեմ ուղղված դիրքորոշում են հայտնել: Համապատասխանաբար, ինձ համար դա միանգամայն բնական եւ ընդունելի էր»,- ասաց Գիորգի Մարգվելաշվիլին:

NDI-ի հարցումը, որն անցկացվել է մարտի 26-ից մինչեւ ապրիլի 18-ը, վկայում է, որ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու գործունեությանը հավանություն տվող քաղաքացիների թվաքանակը կես տարվա ընթացքում նվազել է 26 տոկոսով:

Հիշեցնենք, որ ընթացիկ տարվա մարտին նախկին վարչապետը հրապարակայնորեն հայտարարեց, որ ընտրություններից հետո նախագահը սկզբունքային նոր հատկություններ է դրսեւորել, որ առաջին երկու ամիսների ընթացքում իրենք բազմիցս բանավիճել են, իրենց միջեւ թյուրիմացություններ են ծագել, եւ որ ինքը ներկայումս նախագահի հետ ոչ պաշտոնական հարաբերություններ չի պահպանում: Վերոնշյալ թյուրիմացություններից մեկը Իվանիշվիլին համարում է Գիորգի Մարգվելաշվիլու Հավլաբարի նախագահական նստավայրում աշխատելու որոշումը: Ավելացնենք, որ, վերոնշյալ հարցման արդյունքներով, հարցման ենթարկվածների 40 տոկոսը բացասաբար է գնահատել Իվանիշվիլու կողմից Գիորգի Մարգվելաշվիլու քննադատությունը, 35 տոկոսն այն պաշտպանել է:

Վրաստանի քաղաքացիների շրջանում առավել մեծ աջակցության արժանացած քաղաքական գործիչների ցուցակը գլխավորել է պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան, որն ստացել է հարցման մասնակիցների ձայների 67 տոկոսը:

Վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, որին այժմ աջակցություն է հայտնում Վրաստանի քաղաքացիների 64 տոկոսը, նոյեմբերին վայելում էր հարցվածների 71 տոկոսի հավանությունը: Մի քանի տոկոսով նվազել է նաեւ էներգետիկայի նախարար Կախի Կալաձեի եւ խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու վարկանիշը:

Վրաց հասարակության մեջ հավանության ամենաբարձր մակարդակն ավանդաբար պահպանում է Վրաստանի Պատրիարք Իլիա Երկրորդը: Նրա օգտին քվեարկել է հարցման մասնակիցների 96 տոկոսը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

# ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄ. Ո՞Ր ՄՈԴԵԼԸ ԿՆԵՐԴՐՎԻ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

***Վերջին տարիներին ակտիվ բնույթ է կրում Վրաստանում կենսաթոշակային համակարգի գործող տարբերակից տարբերվող նոր համակարգի կիրարկման անհրաժեշտությանը վերաբերող բանավեճը:***

Ներկա դրությամբ, Վրաստանի էկոնոմիկայի նախարարությունում հիմնվել է կենսաթոշակային բարեփոխման համակարգման գրասենյակ, որն աշխատում է պարտադիր եւ կամավոր ապահովագրական կենսաթոշակային համակարգի ստեղծման ուղղությամբ: Ամենայն հավանականությամբ, գրասենյակի կողմից մշակված օրինածրագը խորհրդարանի քննարկմանը կներկայացվի ընթացիկ տարվա աշնանը: Ներկա դրությամբ, կենսաթոշակների հանձնման հիմքը միայն պետական բյուջեն է: Այդ տարբերակով, կենսաթոշակային ապահովումը հիմնված է համակարգման սկզբունքների վրա, երբ կենսաթոշակը ֆինանսավորվում է բյուջեից, ինչը իր հերթին լրացնում է անաշխատունակ քաղաքացիների հարկերը: 2014 թվականի դրությամբ, կենսաթոշակային ապահովման համար Վրաստանում ծախսվում է 1,3 միլիարդ լարի: Դա կազմում է երկրի պետական բյուջեի ծախսերի բաժնի 14,6 տոկոսը: Վրաստանի բնակչի մեկ շնչի հաշվով այդ գումարը կազմում է մոտ 260 լարի, իսկ վարձակալության աշխատողի հաշվով՝ տարեկան 1750 լարի: Դա նշանակում է, որ վարձակալության մեկ աշխատողը ամսվա հաշվով կերակրում է ավելի քան մեկ կենսաթոշակառուի:

Համաշխարհային բանկի եզրակացությամբ, ժողովրդագրական միտումների հաշվարկմամբ, Վրաստանն արդեն առաջիկա մի քանի տարիների ընթացքում դժվարությունների առջեւ կկանգնի կենսաթոշակային առկա պարտավորությունների կատարման հարցում, քանի որ ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ՝ Վրաստանում, բնակչությունը ծերանում է, հետեւաբար, աճում է կենսաթոշակային տարիքի քաղաքացիների թիվը, իսկ դա նշանակում է, որ աճում են նաեւ այդ ուղղությամբ պետության պարտավորությունները: Արդյունքում ստացվում է հետեւյալ պատկերը: Ստացվում է, որ հատկացվող կենսաթոշակը մի կողմից չի ապահովում արժանավոր ծերությունը, իսկ մյուս կողմից՝ կենսաթոշակների վճարումը բավականին թանկ բավականություն է պետական բյուջեի համար:

Հետեւաբար, ոչ միայն Վրաստանի, այլեւ աշխարհի մյուս երկրների կառավարությունները քայլեր են ձեռնարկում կենսաթոշակային բարեփոխումների անցկացման ուղղությամբ: Մասնավորապես, հարեւան Հայաստանում այդ ուղղությամբ իրականացվող բարեփոխումը նախատեսվում է ներկայումս գործող համակարգման համակարգից կուտակման համակարգի կամ խառը համակարգի անցկացման հնարավորություն: Կուտակային տարբերակի ժամանակ, աշխատողներն իրենց կենսաթոշակային մուծումներով ապահովում են ապագա կենսաթոշակը: Իսկ կենսաթոշակի չափը կախված է կենսաթոշակային մուծումների մեծությունից, կենսաթոշակային հիմնադրամների կողմից իրականացվող ներդրումային ռազմավարության հաջողություններից եւ ֆինանսական ցուցանիշներից: Այն երկրներում, որտեղ էկոնոմիկան հզոր է, եւ ֆինանսական շուկաները զարգացած են, կենսաթոշակային վերոնշյալ տարբերակն իրեն արդարացնում է, քանի որ կուտակային կենսաթոշակը հասնում է մեծ գումարների: Թեպետ մյուս կողմից՝ այն երկրներում, օրինակ՝ Վրաստանում, որտեղ արժեզրկման եւ տնտեսական ռիսկերի մակարդակը մեծ է, կուտակային ռեսուրսները հնարավոր է՝ անգամ արժեզրկվեն: Հենց այդ պատճառով էլ, շատ երկրներ գերադասությունը տալիս են կենսաթոշակային խառը տարբերակին, մի կողմից գործում է սոցիալական կենսաթոշակը (այսինքն՝ նվազագույն կենսաթոշակը), իսկ ապահով ծերության երաշխավորումը լրիվությամբ առնչվում է կենսաթոշակային ներդրումների հետ:



Եթե իշխանությունը իրոք ցանկանում է ձեռնամուխ լինել կենսաթոշակային բարեփոխման, ստիպված պատասխանելու է մի շարք հարցերի, այդ թվում՝ այն հարցին, թե ի՞նչ տարբերակ կներդրվի Վրաստանում. ո՞ր տարիքի քաղաքացիներին է առնչվելու կատարվելիք փոփոխությունը, ի՞նչ ժամկետներում է իրականացվելու կենսաթոշակային բարեփոխումը: Կառավարությունը հաշվարկելու է նաեւ հնարավոր ռիսկերն ու հնարավոր արդյունքները՝ միաժամանակ հաշվի առնելով միջազգային փորձը, ինչը թույլ կտա կենսաթոշակային բարեփոխումների ուղու վրա շրջանցել կամ խուսափել արդեն իսկ բացահայտված եւ ուսումնասիրած հիմնախնդիրները:

*ՅՈՒՐԻ ԽՈՐԱՆՅԱՆ*